ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 14.05. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ հեռահար կապի միջոցով (ZOOM հավելվածով):
Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 14-ը (տասնչորս):
Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
4. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
5. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական
6. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
7. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
8. Թ. Խաչատրյան՝ գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն,
9. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
10. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
11. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
12. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
13. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
14. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. **ԿԳՄՄՆ-ի գրության մասին**

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

2. **Նախորդ տարիների ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններից չատեստավորված և ռազմական ամբիոնի ուսանողների ավարտական քննությունների կազմակերպման նպատակով արտակարգ դրության պայմաններում 2019-2020 ուս տարվա ամփոփիչ ատեստավորման ընթացակարգի լրացուցիչ դրույթներում ռազմական ամբիոնի պետ, գնդապետ Ա. Մկրտչյանի կողմից առաջարկված լրացումների մասին**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

3. **Ավարտական աշխատանքների մատյանների լրացման մասին**

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

4. **ՇՊՀ-ի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի նախաձեռնությամբ համալսարանի ՊԴ և ուսանողական համակազմերի համար նախապատրաստական դասընթացի (ZOOM հարթակով ուսումնական գործունեության կազմակերպման) ծրագրի մշակման և ներկայացման մասին**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

1. ԼՍԵՑԻՆ՝

ԿԳՄՄՆ-ի գրության մասին

Պարոն Սերոբյանը ռեկտորատի անդամներին տեղեկացրեց, որ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանից բուհերի ռեկտորատներին, այդ թվում նաև ՇՊՀ-ի ռեկտորատին գրություն է հղվել, որտեղ նշվում է, որ հաշվի առնելով հղված բազմաթիվ դիմումները նախարարն առաջարկում է բուհի անվճար համակարգում չընդգրկված 2016 թվականի ապրիլի 2-6-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մարտական հերթապահություն իրականացրած (զինվորական գրքույկում համապատասխան նշման կամ զինվորական կոմիսարիատի կողմից տրամադրած տեղեկանքի առկայությամբ) առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի

կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների, ինչպես նաև առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ընդունված և անվճար համակարգում չընդգրկված երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին թույլատրել մասնակցելու ժամանակացույցով նախատեսված քննություններին, այդ թվում ավարտական, մինչև նախարարության կողմից նրանց ուսման վճարի փոխհատուցման տրամադրումը:

ՈՐԱՇԵՑԻՆ՝

Տեղեկությունն ընդունել ի գիտություն

2. ԼՍԵՑԻՆ՝

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ նախորդ տարիներին ամփոփիչ ատեստավորման քննություններից չատեստավորված ուսանողների ավարտական քննությունները կկազմակերպման նախորդ տարիներին գործող ամփոփիչ ատեստավորման քննությունների կարգով:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց նաև, որ ռազմական ամբիոնի բակալավրի կրթական ծրագրով սովորող ավարտական կուրսերի ուսանողները (առկա/հեռակա, բակալավր) պետք է հանձնեն քննություններ, ի տարբերություն համալսարանի մյուս բաժինների ուսնողների, որոնք ավարտական աշխատանքներ են ներկայացնելու, և նշեց, որ ռազմական ամբիոնի պետ, գնդապետ Ա. Մկրտչյանի կողմից ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն է ներկայացվել գրություն, որով պարոն Մկրտչյանը վերոգրյալ քննությունների հետ կապված՝ արտակարգ դրության պայմաններում՝ 2019-2020 ուստարում ամփոփիչ ատեստավորման փոփոխված ընթացակարգի լրացուցիչ դրույթներում առաջարկում է կատարել լրացումներ, որը ներկայացվեց նաև ռեկտորատի անդամներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Գ. Նիկողոսյանի կարծիքով կարելի է գրությամբ ներկայացված առաջարկներն ընդունել որպես ավարտական քննությունների կազմակերպման ցուցում:

ՈՐԱՇԵՑԻՆ՝

Ընդունել Ա. Մկրտչյանի կողմից առաջարկվող դրույթները և արտակարգ դրության պայմաններում 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման ընթացակարգի լրացուցիչ դրույթներում կատարել հետևյալ լրացումները.

1. 1-ին կետում… շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացները (ԱԱ-ի, ռազմական ամբիոնի պետական քննությունների և ՄԹ-ի նախապաշտպանություններ, հրապարակային պաշտպանություններ), շարունակությունը ըստ տեքստի:

2. 5-րդ կետի վերջում ավելացնել հետևյալ լրացումը՝

Իսկ ռազմական ամբիոնի ուսանողներին ըստ մատյանի հերթականության տրամադրվում են հարցաթերթիկներ վիճակահանությամբ ստացված հարցատոմսի համարով, որի բովանդակությունը էլեկտրոնային տարբերակով ուղարկվում է քննվող ուսանողին, նրան տրամադրելով մինչև 30 րոպե ժամանակ հարցերին պատրաստվելու համար:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

Ավարտական աշխատանքների մատյանների լրացման մասին

Պարոն Սերոբյանը դեկաններին հանձնարարեց ավարտական քննությունների հանձնաժողովների անդամներից ճշտել, եթե հնարավոր է համալսարան ներկայանալ և պահպանելով սոցիալական հեռավորություն, քննությունների համապատասխան մատյանները ընդունված կարգով լրացնել և ստորագրել:

Պարոն Սերոբյանն ավարտական քննությունների Գյումրուց ընտրված նախագահներին խնդրեց փոխանցել, որ քննությունն անցկացնելիս նրանք գտնվեն ՇՊՀ-ում, որտեղ նրանց համար և սոցիալական հեռավորություն պահպանելու առնչությամբ, և այլ անհրաժեշտ բոլոր պայմաններն ապահովված կլինեն:

ՈՐԱՇԵՑԻՆ՝

Տեղեկությունն ընդունել ի գիտություն:

4.ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի նախաձեռնությամբ համալսարանի ՊԴ և ուսանողական համակազմերի մասնակցությամբ նախապատրաստական դասընթացի (ZOOM հարթակով ուսումնական գործունեության կազմակերպման) ծրագրի մշակման և ներկայացման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ երկրում համավարակի տարածմամբ պայմանավորված ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի նախաձեռնությամբ համալսարանի ՊԴ և ուսանողական համակազմերի համար նախապատրաստական դասընթացի (ZOOM հարթակով ուսումնական գործունեության կազմակերպման) ծրագիր է մշակվել: Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ համագործակցելով մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի հետ, համատեղ առաջարկվել են

ամբիոնի երկու աշխատակիցների՝Նունե Նազարյանի և Գևորգ Ասատրյանի թեկնածությունները նախապատրաստական դասընթացները իրականացնելու համար: Տիկին Ավետիսյանը նշեց նաև, որ առցանց ուսուցումը երկարաձգվելու պարագայում՝պայմանավորված ՀՀ-ում արտակարգ դրությամբ, անհրաժեշտությունից ելնելով Ն. Նազարյանին ներկայացվել են ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պահանջները և համատեղ կազմվել է ZOOM հարթակում դասավանդողների մասնագիտական գործունեության կազմակերպման նախապատրաստական դասընթացի ծրագիրը և ժամանակացույցը: Վերոգրյալ առաջարկությունը զեկուցագրով ներկայացվել է ռեկտորի ԺՊ-ին՝ խնդրանքով, որ նրա կողմից հանձնարարական տրվի համալսարանի գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի փոխտնօրեն Գ. Ասատրյանին, անհրաժեշտության դեպքում, իրականացնել համալսարանի մասնագիտական կուրսերի ավագների ZOOM հարթակում ուսումնառության կազմակերպման նախապատրաստական դասընթաց ուսանողների և ՊԴ համակազմի համար՝ ըստ ծրագրի և ժամանակացույցի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հավանության արժանացնել զեկուցագրով ներկայացված առաջարկները:
2. Հանձնարարել համալսարանի գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի փոխտնօրեն Գ. Ասատրյանին, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի աշխատակից Ն. Նազարյանին, անհրաժեշտության դեպքում իրականացնել համալսարանի մասնագիտական կուրսերի ավագների միջոցով ZOOM հարթակում ուսումնառության կազմակերպման նախապատրաստական դասընթաց ուսանողների և ՊԴ համակազմի համար՝ ըստ հետագայում կազմված ծրագրի և ժամանակացույցի:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի՝ պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի խորհրդական՝ Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ս. Շահպարոնյան Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի դեկանի — Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետի դեկան՝ — Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի
դեկան՝ — Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետի դեկան՝ — Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ — Ա. Մկրտչյան

Անձն.կառ.և իրավ.ապահովման
բաժնի պետ՝ — Ա. Հովհաննիսյան